# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## 25.08.2015թ. N 06 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**


2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*25 օգոստոսի 2015թվականի N 53*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 06 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի.*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

***Հաստատել Հրազդան քաղաքի ավագանու 2015 թվականի օգոստոսի 25-ի N 06 հերթական նիստի օրակարգը.***

*1.Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 176-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*
*2.Հրազդան քաղաքի 2015 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին*
*3.Վարձավճարները զիջելու մասին*
*4. Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 25 –ի N167 որոշման մեջ լրացում կատարելու մասին*
*5.Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N148 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*
*6. Հրազդանի քաղաքապետարանի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին*
*7.Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին*
*8.Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին*
*9.Հրազդան քաղաքի ավագանու 2015 թվականի հունիսի 09-ի N33 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*
*10.Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասը /այլ հողատեսքի/ աճուրդային կարգով օտարելու մասին*
*11.Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*
*12.Հրազդան քաղաքի ավագանու 2015 թվականի հուլիսի 15-ի N48 որոշումը չեղյալ ճանաչելու մասին*

*13.Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*
*14. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՉԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 օգոստոս 2015թվականի N 54-Ն*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 176-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը.*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

*Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Հրազդան քաղաքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 176-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝*

*1.Եկամտային մասում՝*

*1/ Պետական բյուջեից պատվիրակված լիազորություններ իրականացնելու համար հատուկ միջոցներ տողի <<4358.6>> թիվը փոխարինել <<5342.9>> թվով:*

*2/Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացումներ/սուբվենցիաներ/ տողի <<1249.5>> թիվը փոխարինել <<6249.5>> թվով:*

*3/ Հրազդան քաղաքի աղբահանության վճար տողի <<87000.0>> թիվը փոխարինել <<90000.0>> թվով:*

*4/ Ինքնակամ շենք շինությունների օրինականացման վճար տողի <<42123.8>> թիվը փոխարինել <<45123.8>> թվով:*

*2. Ծախսային մասում՝*

*1/ 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի, <<Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում>> /4251/ հոդվածում <<27808.9>> թիվը փոխարինել <<30295.9>> թվով:*

*2/1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Գրասենյակային սարքավորումներ>> /5122/ հոդվածում <<482.0 >> թիվը փոխարինել <<5482.0>> թվով, <<Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում>> /4251/ հոդվածի հոդվածում <<10060.1>> թիվը փոխարինել <<7633.1>> թվով :*

*3/ 9 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին>> /4511/ հոդվածի <<319895.8 >> թիվը փոխարինել <<326880.1>> թվով :*

*4/ 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական*

*պետական /համայնքային/ կազմակերպություններին>> /4511/ / հոդվածի <<53000.0 >> թիվը փոխարինել <<58000.0>> թվով :*

*5/ 5 բաժնի 6 խմբի 1 դասի 55 ծրագրի, <<Թափառող կենդանիների վնասազերծում>> /4239/ հոդվածում <<400.0>> թիվը փոխարինել <<700.0>> թվով:*

*6/ 8 բաժնի 2 խմբի 4 դասի 51 ծրագրի, <<Այլ ընթացիկ դրամաշնորհներ>> /4639/ հոդվածում <<360.0>> թիվը փոխարինել <<0>> թվով:*

*7/ 6 բաժնի 4 խմբի 1 դասի 51 ծրագրի, <<Հրազդանքաղլույս>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին>> /4511/ հոդվածում <<51067.0>> թիվը փոխարինել <<49067.0>> թվով:*

*8/ 5 բաժնի 1 խմբի 1 դասի 55 ծրագրի <<Աղբահանություն և սան մաքրում>> բյուջետային կազմակերպության << Աշխատավարձեր և հավելավճարներ >> /4111/ հոդվածում <<49824.4>> թիվը փոխարինել <<48824.4>> թվով:*

*9/ 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի, <<Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում>> /5113/ հոդվածում <<86027.3>> թիվը փոխարինել <<85177.3>> թվով, <<Նախագծահետազոտական ծախսեր>> /5134/ հոդվածում <<1820.0>> թիվը փոխարինել <<2670.0>> թվով :*

*Ընդամենը բյուջեի փոփոխությունը կազմում է 11984.3 հազար դրամ:*
*Բյուջեի թիվը և՛ եկամտային , և՛ ծախսային մասում կազմում է 1337268.0 հազար դրամ:*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԷՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*25 օգոստոսի 2015թվականի N 55*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը՝*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

*Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Հրազդանի քաղաքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 176-Ն որոշմամբ հաստատված բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հետևյալ հատկացումները՝*

*1.Ծախսային մաս՝*

*Հրազդան քաղաքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել՝*

*1/ 2000.0 հազար դրամ <<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին>> /4511/ հոդվածին վառելիք ձեռք բերելու համար:*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*25 օգոստոսի 2015թվականի N 56*

*ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ, արվեստի և երաժշտական դպրոցներ հաճախող սոցիալապես անապահով երեխաների վարձավճարները ուսումնասիրելու և զեղչելու նպատակով ստեղծված հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 17-ի N4 արձանագրությունը և Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը,*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

*1.Զիջել Հրազդանի քաղաքապետարանի ենթակայության N15 նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող ներքոնշյալ երեխայի վարձավճարը 100%-ի չափով մեկ տարի ժամկետով.*

*1) Մարիա Ցոլակի Պողոսյան(թիվ 15 մանկապարտեզ- 100%)*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ

5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ԽՈՍՐՈՎ

9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՄԱՐՈՒՍ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 օգոստոսի 2015թվականի N 57*

### *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25 –Ի N 167 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով պլբեստրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 28 –ի N 4 - Ա որոշումը*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈւՄ Է՝***

*Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հրազդանի քաղաքապետարանի ենթակայության <<Մաքուր Հրազդան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 167 որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը.*

*Հավելվածի*

*_ << 13-րդ >> կետից հետո ավելացնել նոր <<14_րդ >> կետ*

*_ << 14-րդ >> << բանվոր >> << 1 >> << 30000 >> << 30000 >>*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԵԼ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
8. ՄԿՐՏՉՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*25 օգոստոսի 2015թվականի N 58*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 148 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի.*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

*Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 2-ի <<Հրազդանի քաղաքապետարանի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոցի 24 նախագծային հիմնարկի շենքից 1442 քմ մակերեսով տարածք անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին>> N 148 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.*

*<<1442 քմ>> բառերը փոխարինել <<1351.3 քմ>> բառերով:*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԻՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԲԵՆ
9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 օգոստոսի 2015թվականի N 59*

### *ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը.*

*Հրազդան քաղաքի ավագանին **ՈՐՈՇՈՒՄ Է՝***

*Հրազդանի քաղաքապետարանի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 228 շենքի 63.33 քմ մակերեսով 31665 /երեսունմեկ հազար վեց հարյուր վաթսունհինգ/ դրամ արժեքով թիվ 4 բնակարանը անհատույց օտարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:*

Կողմ -9 | Դեմ -0 | Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԻՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*25 օգոստոսի 2015թվականի N 60*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը.*

*Հրազդան քաղաքի ավագանին* *<u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>*

*1.Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասերը.*

*1)Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց թիվ 3/1 հասցեում գտնվող 500.0քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամաս՝ 621000 /վեց հարյուր քսանմեկ հազար/ դրամ մեկնարկային գնով /կադաստրային ծածկագիր՝ 07-001-0109-0010/:*

*2)Միկրոշրջան թաղամաս, Գուրակյան փողոց թիվ 31/1 հասցեում գտնվող 150.0քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամաս՝ 287100 /երկու հարյուր ութսունյոթ հազար մեկ հարյուր/ դրամ մեկնարկային գնով /կադաստրային ծածկագիր՝ 07-001-0516-0011/:*

*3)Մ.Բաղրամյան թաղամաս, Գուրակյան փողոց թիվ 32/1 հասցեում գտնվող 54.0քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամաս՝ 104000 /մեկ հարյուր չորս հազար/ դրամ մեկնարկային գնով /կադաստրային ծածկագիր՝ 07-001-0509-0254/:*

*4)Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց թիվ 82 հասցեում գտնվող 96.0քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամաս՝ 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ մեկնարկային գնով /կադաստրային ծածկագիր՝ 07-001-0612-0039/:*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ

5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*25 օգոստոսի 2015թվականի N 61*

### *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը.*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

*1. Թույլատրել ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված բնակավայրերի նպատակային նշանակության հետևյալ հողամասերը՝*

*1)Միկրոշրջան թաղամաս, 6-րդ շենքին հարող տարածք թիվ 9 հողամաս՝ 20.0քմ /ավտոտնակ կառուցելու/՝ 5000 /հինգ հազար/ դրամ տարեկան վարձավճարով:*

*2)Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց թիվ 13/3 հողամաս՝ 20.0քմ /ավտոտնակ կառուցելու/՝ 5000 /հինգ հազար/ դրամ տարեկան վարձավճարով:*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 օգոստոսի 2015թվականի N 62*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 09-Ի N33 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը.*

*Հրազդան քաղաքի ավագանին <u>ՈՐՈՇՈւՄ Է՛</u>*

*Հրազդան քաղաքի ավագանու 2015 թվականի հունիսի 09-ի «Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին» N33 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.*

*- Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում՝ «հասարակական կառուցապատման» բառերը փոխարինել «բնակելի կառուցապատման» բառերով:*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԻԼ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ [illegible]

*ՔԱՂԱՔԱՊԵՏ* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*25 օգոստոսի 2015թվականի N 63*

*ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ /ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ/ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը,*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

*Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող Հարավային թաղամասի Երևան-Սևան մայրուղուն հարող տարածքում գտնվող 0,1հա գյուղատնտեսական նշանակության հողամասը՝ 11000 /տասնմեկ հազար/ դրամ մեկնարկային գնով /կադաստրային ծածկագիր՝07-001-0758-0044/:*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԻԼ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ [illegible]

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 օգոստոսի 2015թվականի N 64*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն և N1920-Ն որոշումները և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի օգոստոսի 4-ի N04/11.2/4353-15 գրությամբ տրամադրված Հրազդանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2015 թվականի ապրիլի 29-ի N13-01/634 գրությունը և քաղաքապետի առաջարկությունը.*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

*1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.062 հա ծածկագիր՝ 07-001-0927-0096, 0.02405 հա ծածկագիր՝ 07-001-0926-0284, 0.01251 հա ծածկագիր՝ 07-001-0924-0077, 0.01165 հա ծածկագիր՝ 07-001-0923-0038, 0.02405 հա ծածկագիր՝ 07-001-0927-0099 վարելահողերի նպատակային նշանակությունը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «էներգետիկայի օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ:*

Կողմ -9    Դեմ -0    Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ

4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ

5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*25 օգոստոսի 2015թվականի N 65*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի N 48 ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը.*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

*Չեղյալ ճանաչել 2015 թվականի հուլիսի 15-ի Հրազդան քաղաքի ավագանու «Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N48 որոշումը:*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱՐԱԶԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ԱՄՐԱՍ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*25 օգոստոսի 2015թվականի N 66*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 5-րդ ենթակետի, 15-րդ կետի 1-ին ենթակետի գ պարբերության և հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը.*

*Հրազդան քաղաքի ավագանին* ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

*1.Թույլատրել փոփոխել Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասի նպատակային նշանակությունը.*
*1)Մարզավան Հյուսիս-Արևմտյան թաղամաս 28/1 հասցեում գտնվող 1000.0քմ մակերեսով հողամասը անտառային հողերից փոփոխել հատուկ պահպանվող տարածքների հողերի հանգստի համար նախատեսված գործառնական նշանակությամբ /ծածկագիր 701-001/:*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*25 օգոստոսի 2015թվականի N 67*

## *ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Դիանա Իկսանովայի 2015 թվականի օգոստոսի 13-ի դիմումը և քաղաքապետի առաջարկությունը.*

*Հրազդան քաղաքի ավագանին* <u>*ՈՐՈՇՈՒՄ Է՝*</u>

*1.Թույլատրել Հրազդան քաղաքի Մ.Բաղրամյան թաղամասի 3-րդ փողոց թիվ 466/1 հասցեում գտնվող, կառուցապատման իրավունքով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N17112014-07-0019, տրված 2014 թվականի նոյեմբերի 17-ին/ Դիանա Իկսանովային տրամադրված հողամասը փոխանակել Մ.Բաղրամյան թաղամասի 110 շենքին հարող տարածք թիվ 8 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N08072015-07-0059,գաղտնաբառ J8XKY1MDTNRR, տրված 2015 թվականի հուլիսի 8-ին/ հողամասի հետ պահպանելով հատակագծային չափերը և մակերեսները:*

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

9. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ